ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 6

# 25.12.2025Թ. ԿՆՔՎԱԾ N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-6» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Չարենցավան «26» 01 2026թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շահգալդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ 1»), մի կողմից, և «ՌՈՁԱ 1» ԳԿ-ն, ի դեմս տնօրեն Պ. Պետրոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 25.12.2025թ. կնքված N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2025/1-6» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.1.1-րդ, 8.5-րդ, 8.15-րդ կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 Սույն համաձայնագրով նախատեսված «Գնորդ 1»-ի իրավունքներն ու պարտականությունները գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապահվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Ալափարս գյուղի մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ «Գնորդ 2»):

1.2 Հաստատել գնման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 1-ը կցվում է):

1.3 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը (վճարման ժամանակացույց)՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 2-ը կցվում է):

1.4 Ապրանքը համաձայնագրով սահմանված ժամկետում «Վաճառող»-ի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 (երկու) օրից ավելի:

1.5 «Վաճառող»-ի կողմից համաձայնագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել «Գնորդ 2»-ի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 (երկու) օրից ավելի:

1.6 Համաձայնագրի գինը կազմում է 299942.5 (երկու հարյուր իննսունինը հազար ինը հարյուր քառասուներկու դրամ հիսուն լումա) ՀՀ դրամ:

Համաձայնագրի գինը ներառում է համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով «Վաճառող»-ի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և «Վաճառող»-ն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ «Գնորդ 2»-ը նվազեցնելու այդ գինը:

1.7 «Գնորդ 2»-ն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները «Վաճառող»-ի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

1.8 Մատակարարված ապրանքն ընդունվում է «Գնորդ 2»-ի և «Վաճառող»-ի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը «Գնորդ 2»-ին հանձնելու փաստը ֆիքսվում է «Գնորդ 2»-ի և «Վաճառող»-ի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև համաձայնագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ «Վաճառող»-ը «Գնորդ 2»-ին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը «Գնորդ 2»-ին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված 3):

1.9 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար համաձայնագրով նախատեսված միջոցները.

բ) «Վաճառող»-ի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

1.10 «Գնորդ 2»-ը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում «Վաճառող»-ին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

1.11 Եթե համաձայնագրի 1.10 կետով սահմանված ժամկետում «Գնորդ 2»-ը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և համաձայնագրի 1.10 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը «Գնորդ 2»-ը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածները կազմված են 4 (չորս) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| «ԳՆՈՐԴ 1» | «ԳՆՈՐԴ 2» | «ՎԱՃԱՌՈՂ» |
|---|---|---|
| Չարենցավանի համայնքապետարան | ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Ալափարս գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ | «ՌՈԶԱ 1» ԳԿ |
| ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1 | գ. Ալափարս 19/5 | Գեղարքունիքի մարզ, գ. Խաչաղբյուր, 1-ին փողոց, տուն 18 |
| ՀՀ ՖՆ ԳՎ | «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ | «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900132111023 | Հ/Հ 16028402301900 | Հ/Հ 2477503277410000 |
| ՀՎՀՀ 03022497 | ՀՎՀՀ 02807476 | ՀՎՀՀ 08419901 |
| | | էլ. հասցեն petros_petrosyan_1973@mail.ru |
| | | հեռ. (+37477) 84-68-54 |
| Համայնքի ղեկավար՝ Հ. Կ. Շահումյան | Տնօրեն՝ Մ. Առայան | Տնօրեն՝ Պ. Պետրոսյան |
| _______________ (ստորագրությունը) | _______________ (ստորագրությունը) | _______________ (ստորագրությունը) |
| Կ.Տ | Կ.Տ | Կ.Տ |

Հավել
25.12.2025թ. կնքված «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-6» ծած
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպա
«26» 01 2026թ. կնքված թիվ 6 համաձա

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետ |
| 63 | 15511200/501 | Կաթ | լիտր | 371.25 | 167062.5 | 450 | գ. Ալափարս 19/5 | 450 | 2026 թվակ հունվար դեկտեմբ ամիսնե |
| 70 | 15551600/501 | Մածուն | կգ | 415.25 | 132880 | 320 | գ. Ալափարս 19/5 | 320 | 2026 թվակ հունվար դեկտեմբ ամիսնե |

«ԳՆՈՐԴ 1»
Չարենցավանի
համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան
հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար
Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԳՆՈՐԴ 2»
ՀՀ Կոտայքի մարզի
Չարենցավան
համայնքի Ալափարս գյուղի
մանկապարտեզ ՀՈԱԿ
գ. Ալափարս 19/5
«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 16028402301900
ՀՎՀՀ 02807476

Տնօրեն՝ Մ. Աթայան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»
«ՌՈԶԱ 1» ԳԿ
Գեղարքունիքի մարզ, գ. Խաչաղբյուր, 1-ին փողոց, տուն 18
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2477503277410000
ՀՎՀՀ 08419901
էլ. հասցեն
petros_petrosyan_1973@mail.ru
հեռ. (+37477) 84-68-54

Տնօրեն՝ Պ. Պետրոսյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավել
25.12.2025թ. կնքված «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-6» ծած
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպա
«26» 01 2026թ. կնքված թիվ 6 համաձայ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ ըստ ամիսների. այդ թվ | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 63 | 15511200/501 | Կաթ | 167062.5 | 167062.5 | 167062.5 | 167062.5 | 167062.5 | 167062.5 | 167062.5 | 167062.5 | 167062.5 | 167062.5 | 167062.5 | 167062.5 | 167062.5 |
| 70 | 15551600/501 | Մածուն | 132880 | 132880 | 132880 | 132880 | 132880 | 132880 | 132880 | 132880 | 132880 | 132880 | 132880 | 132880 | 132880 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի մատակարարված խմբաքանակների:

«ԳՆՈՐԴ 1»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Ճաղցայան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԳՆՈՐԴ 2»
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Ալափարս գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ
գ. Ալափարս 19/5
«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 16028402301900
ՀՎՀՀ 02807476

Տնօրեն՝ Մ. Աթայան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»
«ՌՈԶԱ 1» ԳԿ
Գեղարքունիքի մարզ, գ. Խաչաղբյուր, 1-ին փողոց, տուն 18
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2477503277410000
ՀՎՀՀ 08419901
էլ. հասցեն petros_petrosyan_1973@mail ru
հեռ. (+37477) 84-68-54

Տնօրեն՝ Պ. Պետրոսյան

(ստորագրությունը)
Կ.Տ